ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 28 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ Ε/40/1725-25 առ «11» 07 2025թ.

«Սմառ» ՍՊԸ
տնօրեն
Ս. Պետրոսյանին

(Ծանուցում №ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-31/24-01/374 պայմանագիրը միակողմանի մասնակի լուծման մասին)

Հարգելի՛ տիկին Պետրոսյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար մանոմետրերի ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-31/24» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Սմառ» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի դեկտեմբերի 2-ին կնքվել է №ՀԱԷԿ-ԳՀՊՁԲ-31/24-01/374 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 1-ով (տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց) ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանված «պայմանագիրը կնքելուց հետո 120 օրացուցային օրվա ընթացքում»:

Պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 1-ով սահմանված է նաև, որ 1-ին չափաբաժնում ներկայացված ճնշաչափի մատակարարման ենթակա քանակը 20 հատ է, որոնցից մինչ օրս մատակարարվել է միայն 13 հատը, որոնք չեն համապատասխանում պայմանագրի պահանջներին (համաձայն 14.03.2025թ թիվ 03.25-111 ակտի)

Պայմանագրով սահմանված է.

- 1.1 կետ՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք) ...»:

- 2.1.7 կետ՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի,

- 2.4.1 կետ՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները՝ տեղեկացնում եմ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի մասամբ լուծում է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Սմառ» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի դեկտեմբերի 2-ին կնքված № ՀԱԷԿ-ԳՀՊՁԲ-31/24-01/374 պայմանագիրը 1-ին չափաբաժնի մասով և առաջարկվում է ծանուցվելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում «ՀԱԷԿ» ՓԲ ընկերության «Կոնվերս բանկ» ՓԲԸ 1930000199200100 հաշվեհամարին վճարել պայմանագրի (91 740 ՀՀ դրամ) և որակավորման (137 610 ՀՀ դրամ) ապահովումները:

Հարգանքով՝

ԳՏՏ - ԸՀՏ Ս. Մաթևոսյան

Կատ.
ԳԸԲ գլխավոր մասնագետ –
խմբի ղեկավար
Հռիփսիմե Ռամազյան
Հեռ. 010-20-04-91